«Առաջ աջակենտրոն» Կուսակցություն

Ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվություն

2025 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընդգրկող ժամանակաշրջանի համար

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առաջ աջակենտրոն» Կուսակցության ղեկավարությանը
և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Առաջ աջակենտրոն» Կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2025 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընդգրկող ժամանակաշրջանի համար կազմված, ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը՝ պատրաստված «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 22 հուլիսի 2022թ. N 04-Ն որոշմանը համապատասխան (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն):

Մեր կարծիքով, կից տարեկան հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում Կուսակցության՝ 2025 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, գույքի, պարտավորությունների, ինչպես նաև «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-Ն որոշմամբ պահանջվող այլ տեղեկությունների վերաբերյալ տվյալները՝ պատրաստված «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կուսակցությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի»* (Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող մասնագիտական էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում - Տարեկան հաշվետվության հիմունքը

Առանց ձևափոխելու մեր կարծիքը՝ ուշադրություն ենք հրավիրում տարեկան հաշվետվության պատրաստման հատուկ հիմունքին: Կուսակցության ղեկավարությունը կից տարեկան հաշվետվությունը կազմել է ոչ թե ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի հաշվետու հիմունքների, այդ թվում՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, այլ՝ «Կուսակցությունների մասին»

ՀՀ սահմանադրական օրենքի և Կառուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-Ն որոշմամբ սահմանված կուսակցության տարեկան հաշվետվության ձևի, դրա լրացման և հրապարակման կարգի պահանջների հիման վրա: Հետևաբար, կից տարեկան հաշվետվությունը պատրաստված է հատուկ նպատակի համար և կարող է չհամապատասխանել այլ նպատակների համար օգտագործման: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հանգամանքի կապակցությամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը տարեկան հաշվետվության համար

Ղեկավարությունը պատասխանատու է «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի համաձայն տարեկան հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ տարեկան հաշվետվության պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են տարեկան հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ տարեկան հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն տարեկան հաշվետվությունն օգտագործողների՝ այդ տարեկան հաշվետվության հիման վրա կայացվող որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով տարեկան հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Կուսակցության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք տարեկան հաշվետվության ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև տարեկան հաշվետվության հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Հայկ Մարգարյան

Տնօրեն բաժնետեր

Լիլիթ Կատոյան

Առաջադրանքի պատասխանատու

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ

27 ապրիլի 2026թ.